



26. ԹԶՈՒԿԻ ՀԵՔԻԱԹԸ

(ԿՐՆՅԻ-ԲԻՐԻՆՅԻ⁸⁾)

ՄԵ թաքավոր ուներ իրեք հատ ազար տղա: Տղեքի արհեստոն ի՞նչ էր. տղեքը ավշի ին, սաղ օրը էթըմ ին չոլերը, հիրանց համար ավըկուշ ին անըմ:

Օրերից մե օր մենձ ախապերն ասավ.—Էլ էս յաներին ավ չըկա, էկեք մե իրեք տարգա պաղրաստություն տեսնանք, էթանք մե հուրիշ երգիր:

Թաղարուք տեհան, հելան հընգան ճամփա: Շատ գացին, թե քիչ, շատ ու քիչն էլ Աստված գիղի, հասան մե չայիր-չիման տեղ, չաղի զանին նստան, էկավ, մութն հընգավ:

Դու բե, որ էտի Սև ու Սիվտակ զմերի խողն ա:

Հառավոտը, որ աղոթրանն ակսեց ճողճղալ, տղեքը հելան վեր, զենքերը հաքան, ձիանքը նստան, որ էթան, մենձ ախապերն ասավ.—Մեզանից մեկն ու մեկը թո մնա տանը, էրկսով էթանք, վով գիղի փորցանք-մորցանք կարող ա պատահի:

Ըտենց էլ արին, էրկու ախապերը գացին, մենձ ախապերը մնաց տանը: Հիրիգվա կողմը մենձ ախապերը բերեց օջախ սարքեց, սկսեց ճաշ-մաշ պաղրաստել:

Մեկ էլ տեհավ, որ հեսա խորի մջից մե հատ թզուկ մարթ դուս էկավ՝ հինքը մե թիզ, միրուքը տասնեմեկ թիզ՝ փաթաթած մշկին:

—Էս ինչ մուռոտառ մարթ ա, —ասավ, —դե ուս'դ էլ, կորի՛ ըս-տեղից:

Թզուկը էս խոսքերը լսելու պեստ հելավ տղին վերցեց, օխտ անքամ ֆոռցրեց գլխի վրեն, զանեց գետին, ճաշն ու կրակը ավի-րեց՝ դե գնա՞ւ, ասավ, մեկ էլ էս յաները չերևաս:

Հիրիկոնն ախապերներն էկան տեհան՝ ո՛չ ճաշ կա, ո՛չ էլ հի-րանց ախապերն ա էրկըմ: Դես ման էկան, դեն ման էկան, տեհան՝ հեսա չաղրի մե յանին ախապերը բեռուշ հընգած, անջաղ սնջըմ ա:

8 Վերնագրի պարսկերեն տարբերակը (Ծ. Կ.):

Ասին.—Հը, ի՞նչ կա, ախպե՛ր ջան, էս ի՞նչ ա պատահե:

Ախպերն ասավ.—Հե՛չ, ոչինչ չի պատահե, հելա, որ էթամ ձիան հորուզը փոխեմ, ոտս առավ քարին, թափարոս առամ, հընդամ, մեշքս ցավը մ ա:

Տղեքն ասին.—Դե լավ ա, հուրիշ բան չի պատահե:

Հերսի օրը միշնեկ ախպերը մնաց պահեկ: Էլի թզուկը խորից դուս էկավ, տեհավ տղին, ստան էլ վերցեց հիրա բոյով մեկ (այ ընդա բոյը մեռնի), Փոռցը տվեց գետին, հարսը-փարս արավ, կրակն հնացրեց՝ դե գնա՞ւ, ասավ, էլ քեզ էս յաներին չըտենամ:

Հիրիկուն ախպերներն էկան, էս տղեն էլ խափեց, ասավ.—Զի-անից հընդամ, մեշկս լուկվավ:

Հերթը հասավ պստի ախպորը:

Ախպերները գացին:

Տղեն հելավ, որ ճաշի թաղարուք անի, թզուկը խորից դուս էկավ, տեհավ, որ, ըհը, հեսա մե մարթ ձիանքը հարցկե, արխային ման ա գալըմ, ասավ.—Ես հերեկ չասի՞մ, որ էլ էս յաներին չեր-փաք, ինչ անամոթ մարթ եք, հիմացե՛ք, էրեկ ինայեր եմ, հէսօր չեմ ինայի, հա:

Տղեն դարցավ տեհավ, որ հեսա մե պստի լիլիպուտ մարթ, հին-քը՝ մե թիզ, միրուքը՝ 11 թիզ՝ փաթթած մեշկին:

—Կորի՛,—ասավ,—մուխտառ թազի, հըլը մե ստա սվթին հիշ-կա, հիրա խոսալուն հիշկա:

Խոսքներն հասավ, հելան կպան հիրար, տղեն թրով զանեց թզուկի հուսախառ կտրեց, թզուկը յարալու փախավ:

Տղեքը հիրիկունն էկան, տեհան ոչ մե բան չի պատահե, տղեն՝ սաղ-սալամաթ, ճաշն էլ՝ պատրաստ: Կերան-խման, հելան քնան:

Հառափոտ պստի ախպերն ասավ.—Ձեզանից պահեմ, Ասսուց ինչ պահեմ, հերեկ հիրիկունն հելամ, որ ճաշ էկեմ, մեկ էլ տենամ՝ խորի մջից մե հատ բեջուռա թիզմուրուս դուս էկավ, հինքը՝ մե թիզ, բեխ-մորուքը՝ եսիմ քանի թիզ, էկավ կալմակալ քցեց, հոր-թուրորթ արավ, թուրս հանիմ, մե հատ տալու բաշտան թզուկս փովավ գետին, հելավ փախսեփախ գնաց հիրանը քցեց խորը:

Ախպերնեն ասին.—Կա-չըկա, թզուկը հիմի էլ խորի մեջ կըհը-նի, եկեք էթանք ման գանք:

Ախպերներն հելան գացին դբա խորը:

Վով կըմտնի խորը, վով չի մտնի, մենձ ախպերն ասավ՝ ես կըմտնեմ:

Մենձ ախպորն հիշցրին խորը, հըլը կեսը չէր հիշե, բոռաց՝ էրքամ, վառվամ, քաշե՛ք դուս: Քաշին հանին: Միշնեկին հիշցրին, էս էլ բոռաց՝ էփամ, խորովվամ, դուս հանեք: Ըստան էլ հանին:

Պստի ախաղերն ասավ.—Ընձի որ կը հշցնեք, ես իշքան կասեմ՝ էրփամ, վառփամ, անգաջ չանե՛ք:

Ախաղերներն ասին՝ լա՛վ:

Պստի ախաղորն հշցրին խորը, իշքան բոռաց ասավ՝ էրփամ, վառփամ, սայմիշ չարին, հշցրին:

Տղեն գնաց հասավ խորի տակը, տեհավ մե հատ մեծ պալատ: Տեհավ, որ հեսա պալատի մջին մե հատ հուրի-փերի ախչիկ, նստած ակուշկին, քյարզյա ա անըմ:

Ախչիկը որ տղին տեհավ, ասավ.—Ի սեր Ասսու, տղա՛, էղ որդեղից էկար, շուտ արա գնա՛ ըստեղից, քանի թզուկը չի հմացե, թե չէ որ քնած տեղից հելեր ա, վերչդ կրտա:

Տղեն ըսկի սայմիշ չարավ, ասավ.—Կանաս մեքյա հա՛ց բե ու-տեմ, սոված եմ:

Ախչիկը հաց բերեց, տղեն սոված էր, կերավ կշտացավ, ասավ.—Ախչի՛ ջան, դու ի՞նչ ախչիկ ես:

Ախչիկն ասավ.—Մենք իրեք քուր ենք, մեզի փախցրե բերեր են ըստեղ. ես թզուկի նշանածն եմ, քուրերիս էլ բերեր են Սև ու Սիւ-տակ ղեերի համար:

Տղեն ասավ.—Քո անունն ի՞նչ ա:

Ախչիկն ասավ՝ Գյուլվարթ ա:

—Դե, —ասավ, —Գյուլվա'րթ, գնա թզուկին ձե՞ն տու, թո գա:

Գյուլվարթը գնաց թզուկին ասավ.—Արի՛, մարթ ա էկե, քեզի կանչըմ ա:

Թզուկը հեռառտավ, ասավ.—Էղ վո՞վ ա հոխակ արե էկեր իմ սայմանը:

Հիրանը մե թափ տվեց, ճվճագ, հելավ քշեց տղի վրեն:

—Հը, —ասավ տղեն, —թզո՛ւկ ախաղեր, ո՞նց ես:

Թզուկն ասավ.—Տո հըլը ըստան իշկա, հա՛, որ մարթի հալը-քեֆ էլ ա հարցընըմ: Քո ինչ բանն ա, ոնց եմ, ոնց չեմ:

Ասավ, վերցեց զյուրզն ու էկավ:

—Հը, տղա՛, հառեշ ես խփե՞մ, թե՞ դու:

Տղեն ասավ.—Մնորը քոնն ա, դո՛ւ խփի:

Թզուկն առավ զյուրզը, գնաց-էկավ, զանեց, որ զանեց, տղեն թռավ էն յանը կայնավ:

Դորն հասավ տղեն, տղեն ասավ.—Էս ինչ ա, որ զյուրզով խփեմ, թուրը քաշեց, զանելու բաշտան թզուկին էրկու կտոր արավ, մե կտորն հընգավ էս յանը, մյուս կտորը հընգավ էն յանը:

Գյուլվարթին ուրախացավ, էկավ փաթթվավ տղին, ասավ.—Տղա՛, հալալ հընի կո կերած կաթը, արի էմանք բալքե իմ քուրերին էլ ազաղես:

Տղեն ասավ. — Ընչի քո քուրերն հո՞ւր են:

Գյուլվարժն ասավ. — Իմ խեղճ քուրերն էլ են գերության մեջ:

— Որդե՞:

— Սև ու Սիվտակ դեերի կուշտը:

— Դու ընդանց մենան ե՞ս, թե՞ պստիկը:

Գյուլվարժն ասավ՝ մենան եմ:

— Իե լավ, — ասեց տղեն, — դու կըդառնաս իմ մենա ախազոր

կնիկը:

Ասավ ու ճամփեն տվեց դեմք, գնաց հասավ Սև դկի խողը: Նես մտավ պալատը, տեհավ՝ հեսա մե հատ սիրուն ախչիկ նստած ակուշկին քյարզյա ա անըմ: Ախչիկը, տղին որ տեհավ, խելքամաղ հելավ:

— Հեյ տղա, — ասավ, — դու էդ ո՞նց ես հընցե կրինջի-բիրինջի սայմանից, էդ ի՞նչ ոփակ ա քո ոփակը:

Տղեն ասավ. — Էլ կրինջի-բիրինջի չըկաա... ընդան կուրբան եմ արե քո մենա քվորը:

Ախչիկն ասավ. — **Տղա'**, դե որ ըտենց ա, հեռացի՛ ըստեղից, թե չէ հեսա, հուր որ ա, Սև դկը կըզա, մեծ թիքեղ անգածդ կըթողի:

Տղեն ասավ. — Սոված եմ, մեքյա հաց բե ուտեմ, նոր վախցցրա՛:

Տղեն հացը կերպավ պրծավ, տեհավ, որ հեսա Սև դկը զալըմ ա՝ մե ջաղացի քար կապած մե ոտին, մե քար էլ կապած մեկէլ ոտին, աշխրքին իշքան գել-զազան, թոշուն կա, հավաքե, տվե հառեչը, բերըմ ա: Դկը, որ տղին տեհավ, էդ ավկուշը թողեց քշեց տղի վրեն:

— Հեյ, իսա՞ն օղի, — ասավ, — ի՞նչ գործ ունես իմ խողի մեջը:

Տղեն ասավ՝ էկեր եմ քո վրեն կոփի:

Ախչիկը շատ վախեցավ, ասավ. — Հեյ վախ, տղին հըմի մե զուրզի փայ կանի:

Դկը զոռաց, ասավ. — Հը՛, տղա', հառեչ ես զանեմ, թե դո՞ւ:

Տղեն ասավ. — Քո սայմանի մեջն եմ, հերթը քո՞նն ա, դո՞ւ զան:

Դկը քառասուն զազ հետ գնաց, թափ առավ էկավ, որ զանեց, տղեն թող ու զումանի մեջ կորավ:

Դեն ասավ. — Հեյ վախ, մե կտոր էլ չըմնաց, որ իսանօղու միս ուտեմ, շատուց ա իսանի միս չի հընգե ագուեքիս տակը:

Տղեն ձեն տվեց, ասավ. — Հեյ, դկ', կե՛ր, նո՞ր մարսի:

Տղեն հելավ վեր, հերթն հիրանն էր, թուրը քաշեց, տալուն բաշ-տան՝ դկին արավ էրկու կտոր:

Դկը ձեն տվեց, ասավ. — **Տղա'**, մե՛կ էլ զան:

Տղեն ասավ. — Մորից մե անգամ եմ ծնվե:

Էդ քվորն էլ՝ Լուսվարթին, նշան դրեց միշնեկ ախազոր համար, ճանապարհը շարունակեց: Գնաց հասավ Սիվտակ դկի խորը, տե-

Հավ, որ հեսա մե հատ հուրի-հրեղեն ախչիկ նստած ակուշկինքյարզյա յա անըմ, էնքան սիրուն էր, որ լուսնակին ասըմ էր՝ դու դուս մի՛ էլ, ես ըստեղ եմ: Ախչիկն էլ որ տղին տեհավ, թուքը բերանին չորացավ, ասավ. «Տղա՛, էս ո՞նց ես դու սաղ-սալամաթէ էկե հասե ըստե, բա կրինջի-բիրինջին ինան Սև դեղ քեզ չըպատահա՞ն»:

Տղեն պատմեց եղելությունն, ասավ.—Կրինջի-բիրինջի մեյիդը փոխմ, կուրբան արիմ մենա քվորդ, Սև դեղին կուրբան արիմ միշնեկ քվորդ, Միվտակ դեկին էլ Հըմի կուրբան կանեմ քեզի:

Ախչիկն ուրախացավ, սրտպնդվավ, բերեց տղին հացավորցրեց:

Տղեն ասավ.—Մենձ քվորդ՝ Գյուլվարթին, տվեր եմ իմ մենա ախապորը, միշնեկ քվորդ՝ Լուսվարթին, տվեր եմ իմ միշնեկ ախապորը, դու էլ իմ կամաթին ես:

Ախչիկը շատ ուրախացավ: Հըմա էդ վախտը երգինք-գետինք դղրդաց, մեկ էլ հիշկացին, որ հեսա Միվտակ դեղ գալրմ ա, մե ծառ քոքահան արե, դրեր ա Հուսին, երգնքի էրամ-թոչուն էլ էդ ծառի վրեն:

Դեն էկավ մտավ տունը, ոթֆրտաց-ոթֆրտաց, ասավ.—Էս ինչ Հողածինի փոտ ա գալրմ, շատուց ա Հողածինի միս չեմ կերե:

Տղին, որ տեհավ, մեքյա կակղավ, ասավ.—Տղա՛, դու վո՞վ ես, էս ոնց ես համարձակվե գաս մտնես իմ խողը:

Տղեն ասավ.—Տան մեջ բոռալը թավը չի, կանաս մե հատ դո՛ւս արի մեյդան:

Դեն հելավ մեյդան, ասավ.—Հը, տղա՛, հառեչ ո՞ր մեկս գանի:

Տղեն ասավ.—Է՛ս քո սայմանն ա, հառեչ դո՛ւ զան:

Միվտակ դեղ զյուրզը վերցեց քցեց, թող-դումանն հելավ արեկի հառեչն առավ՝ հեյ վախ, ասավ, զյաղեն ընենց ջնջիսվավ, որ մե թիքյա միս էլ Հըմնաց՝ ուտիմ, սիրտս հովանա:

Տղեն ձեն տվեց, ասավ.—Հեյ, դե՛ ախպեր, ըստեղ եմ, քեզի պինդ պահի, հիմի իմ դորն ա:

Վարթիշաղը տղի ձենը լսեց՝ սրտպնդավ:

Տղեն հելավ վեր, թուրը քաշեց, տարավ-բերեց, առա հա՛, որ զանեց Միվտակ դեկին, հալալ մեշտեղից արավ էրկու թիքյա:

Դեղ ձեն տվեց, ասավ.—Տղա՛, մե՛կ էլ զան:

Տղեն ասավ.—Զէ՛, իմ մերն ընձի մե անքամ ա բերե:

Վարթիշաղը տղին վերցեց տարավ տունը, իրեք օր կերան, խման, քեֆ արին, չուզողի էլ աշկը հանին, վրա չորրորդ օրը Վարթիշաղը տղին տարավ միվտակ դեկի կանուչնին, ձիանքին նշան տվեց, հետո զացին մե դոմի պեստ տեղ, իրեք հատ կոչ կար կա-

պած՝ սև, սիվտակ, կարմիր: Ասավ. «Էս սև կոչը Սև գեինն էր, սիվ-տակը՝ Միվտակ զեինը, էս կարմիր կոչն էլ թզուկինն էր»:

Տղեն վերցեց իրեք քուրերին, տարավ խորի դուս գալու տեղը, կայնավ, որ էդ մարմի ախապերները հըլա խորի բերնին սպասարմ ին:

Տղեն ձեն տվեց մենձ ախապորը, ասավ՝ շրիդը կախի՛, մենձ ախապերը շրիդը կախեց, մենձ քվորը հանեց դուս, ասավ՝ էսի քո կնիկն ա: Ձեն տվեց միջնեկ ախապորը, միջնեկ ախապերն շրիդն հիշ-ցըրեց, միջնեկ քվորը հանեց դուս, ասավ՝ էս էլ քո կնիկն ա:

—Դե՛, —ասավ, —շրիդը կախե՛ք, որ իմ կնգան էլ հանեք դուս: Կնիկն ասավ. —Հառեչ դո՛ւ էլ:

Տղեն չըհամաձայնվավ: Շրիդը կախին պստի քվորն էլ քաշին հանին:

Ասավ. —Դե՛, շրիդն հիշցըրի՛ք, որ հըմի էլ ես դուս գամ:

Ախապերներն հիրար մեջ խորհուրդ ին արե, էլ շրիդը չըհիշցըրին:

Քուրերը խնթըրվան, ասին. —Ըլաս էնի ձեր ախապերն էր, ձեզի համար շատ էր մտածըմ, շատ չարչըրվավ:

Տղեքը չըլսան, հըլը մե զատ էլ ահ տվին, ասին. —Ինչ որ տենըմ եք, մեր հորը չըպատմեք:

Ախապերներն առան հիրանց կնանիքին, Վարթիշաղին էլ հետ-ները ու ճամփա հընգան: Շատ գացին, քիչ գացին, հասան հիրանց քաղաքը:

Թո սրանք մնան ստե, մենք խաբարը տանք պստի ախապորից: Պստի ախապերը մտքի տակ հընգավ, հիշեց Վարթիշաղի ասածը, որը ասեր էր, թե բան ա, եթե քեզի թողեն խորի մեջը, չըկանաս դուս գա, կէթաս ձիանքի ու կոչերի կուշտը, սվթա քեզի կըքցես կարմիր կոչի վրեն, կարմիրը քեզի կըքցի սկի վրեն, սեն էլ՝ սիվտա-կի վրեն, քեզի կըհանեն լուս աշխարհ:

Տղեն հելավ գնաց կոչերի կուշտը, վոազավ, սֆթա հիրան քցեց սիվտակ կոչի վրեն, սիվտակը քցեց կարմիր, կարմիրը քցեց սկի վրեն, սև կոչը տարավ տղին քցեց ավելի մութ աշխարհ:

Տղեն գնաց ձիանքի կուշտը, ձիանքից մազ քաշեց, դրեց ծոցը, յափնջին առավ, ճանապարհը շարունակեց:

Գնաց, գնաց, վերչը հասավ մե քաղաք: Մե պառավ կնգա կուշտ կոնախ հելավ:

Ասավ. —Մարե՛, էս ի՞նչ քաղաք ա:

Պառավն ասավ. —Որդի՛ ջան, թաքավորանիստ քաղաք ա:

Տղեն սոված էր, պառավը հաց բերեց, կերավ, ասավ. —Աղե՛ ջան, մեքյա ծուր կըտա՞ս:

Պառավն հելավ փետե կոտն առավ գնաց դուս, շոեց մեջը, բե-րեց տվեց տղին:

Տղեն ջուրը խմավ, տեհավ՝ շոռ ա, Հարցրեց, ասավ.—Մարե՛,
Էս ջուրն ընչա՞ ըսենց շոռ:

Պառավն ասավ.—Որդի՛ ջան, քեզնից պահեմ, Ասսուց ինչ պա-
հեմ: Մեր քաղաքը ջուր չունի, էտ էլ որ տվիմ քե, ջուր չէր, հելամ
հաշտը, մերյա շոփմ էդ կոտի մեջը, բերիմ տվիմ քե:

Տղեն թո՛ւ, թո՛ւ արավ, նոր էլ որդե, հելածն հելած էր:

Ասավ.—Ոչի՞նչ, մարե՛ ջան, մենք կնիկ ես, վնաս չունի:

—Մարե՛,—Հարցրեց տղեն, —բա էդ ո՞նց ա, որ ձեր քաղաքում
ջուր չըկա:

—Կա, բալա՛ ջան, ընչի չըկա: Ջուր կա, հըմա էդ ախազրի կուշ-
տը մե հատ ահուելի վիշաբ ա փեյիդ էկե: Մինչև օրական մե ախչիկ
չըտանք, վիշաբը մե կում ջուր չի տա մեզի: Հեքուց էլ թաքավորի
ախչկա հերթն ա, ընդան պտի ուտի:

Հեքսի օրը տղեն քնից հելավ վեր, տեհավ, որ քաղաքը մե ընենց
գոռում-գոչում ա հընգե, որ տերն ազադի: Տղեն գնաց հախազրի յա-
նը, տեհավ, որ հեսա թաքավորի ախչկան բերին կապին հախազրի
կուշտը, որ վիշաբը գա ուտի:

Տղի թբեթը չըտարավ, գնաց կայնավ ախչկա կուշտը:

Ախչիկը լալըմ, հիրան սպանըմ էր:

Տղեն, որ տեհավ, ասավ.—Երիտասա'րի, ընչի՞ էկար, մեղք ես,
գնա՛, հեռացի՛:

Տղեն ասավ.—Ո՛չ, չեմ հեռանա, իմ արունը քո արնից կարմիր
չի:

Տղեն գլոխը դրեց ախչկա չոքին, որ քնի, աշկը հըլը չէր կպցրե,
վիշաբն երևաց: Ախչիկը լացավ, որ լացավ, արցունքի մե կաթն
հընգավ տղի հերեսին, տղեն զարթնավ: Վիշաբը յավաշ-յավաշ մո-
տենըմ էր, տղեն թուրը քաշեց, հասավ վիշաբին վլրթեց, թիքա-
թիքա արեց, կոլոնեց: Ախչիկը ձեռը կոխեց արնի մեջ, զանեց տղի
մշկին, նշան արավ: Ախչիկը գնաց հիրանց տունը, տղեն՝ պառավի:

—Դե, —ասավ, —մարե՛, հիմի իշքան ուզըմ ես, գնա ջո՛ւր կրի:

Պառավն հելավ, խունջանը քցեց ոտերը, էրկու ծակ վեղրո ու-
ներ, վերցեց, էրկու ոտ ուներ, էրկուսն էլ չունեցողից փոխ առավ,
վազավ ախպուրը:

Խարարը տանք թաքավորի ախչկանից:

Ախչիկն ուրախ-ուրախ էկավ տուն, պատմեց, ինչ որ հելել
էր: Թաքավորը շատ ուրախացավ, կանչեց հիրա վաքիլ-վազրին,
ասավ. «Գիղի յաման, զացեք էս սհաթին քթե՛ք, բերե՛ք»:

Վաքիլ-վազրիը խառնվան հիրար, հելան զացին քաղաքը, դես
ման էկան, դեն ման էկան, սալսով էկան կայնան պառավի տան
վրեն: Տղեն տանն էր, վերցին տարան թաքավորի կուշտը: Թաքա-

վորը տեհավ, որ մե ջահել սիրուն տղայա, ասավ. «Երիտասարթ, դու իմ ախչկա փրգիչն ես, ինչ որ լեզուդ պտում ա, ասա՛, տամ»:

Տղեն ասավ.—Թաքավորն աբրած կենա, ես ոչ մե բան չեմ ուղամ, իմ խնդիրքը միայն էն ա, որ թողեք հընեմ լուս աշխարհ, ես լուս աշխարհի մարթ եմ:

Թաքավորն ասավ.—Որթի՛ ջան, մի՛ ամանչի, ասա՛:

Տղեն երթկավ:

Թաքավորն հրամայեց, ասավ.—Զմրուխտ կշին բերե՛ք:

Գացին, թաքավորի հրամանով Զմրուխտ կշին բերին:

Թաքավորն ասավ.—Էս երիտասարթին կըտանես սաղ-սալամաթ կըհանես լուս աշխարհ:

Կուշն ասավ.—Թաքավորն աբրած կենա, դու գիղես, որ իմ պառավ ժամանակն ա, ուժից, Հալից հընգեր եմ, վախենըմ եմ, կուփաթս չի պատի:

Թաքավորն ասավ.—Պտի տանես:

Կուշն ասավ.—Լա՛վ, որ ասըմ ես, ասըմ, կըտանեմ, հըմա մե շինգ օր ժամանակ տու, մեկ էլ լավ կե՛ր տու:

Թաքավորն ասավ.—Կշի պահանջը կատարե՛ք:

Մե հինգ օր կուշը լավ կերավ, չաղացավ, ուժ հավաքեց, ասավ.—Տղա՛, ես արթեն պաղպաստ եմ, հետդ կըվերցես քառասուն ոխչրի դմակ, քառասուն տիկ գինի, կընստես վրես, կըթոնենք, ճամփին որ սովածցամ, զա՛ կանեմ՝ մե հատ դմակ կըտաս, դու կանեմ՝ մե տիկ գինի:

Տղեն ասավ.—Աշկիս վրեն:

—Դե, —ասավ.—Էտ ա, տղա՛, ել նստի՛ վրես, բեռն էլ պինդ կապի, որ ճամփին չըհընգնի:

Տղեն հեղավ նստավ կշի վրեն, բեռները կապին, հընգան ճամփա:

Գացին, հասերեհասին խորի կեսը, դմակը պրծավ: Կուշն արավ դա՛, տղեն տեհավ, որ դմակ չըկա, կորեց հիրա փափուկ տեղից մե կտոր միս, տվեց կշին: Կուշը տեհավ, որ միսը չոռ ա, պահեց լեզվի տակ, տղին բան չասեց:

Կուշը տղին հանեց լուս աշխարհ, ասավ.—Տղա՛, մե քելա՛, տեհամ սաղ-սալամաթ ե՞ս:

Տղեն ասավ.—Սաղ եմ, հըմա ոտերս մեքյա դմբրած ա:

Կուշն ասավ.—Սութ ես ասըմ:

Տղեն ուզեց էրթում ուտի:

Կուշը լեզվի տակից միսը հանեց, ասավ.—Տղա՛, ոտդ բա՛ց:

Տղեն ոտը բացեց, կուշը միսը դրեց տեղը, լզեց, կպցրեց, տղեն հընգավ ճամփա, կուշն էլ թուավ գնաց:

Տղեն շատ գնաց, քիչ գնաց, հանդիբավ մե չորանի:

—Չորան ախապեր, —ասավ, —հէսօր քո կոնսախն եմ:

Չորանն ասավ.—Աշկիս վրեն:

Տղեն ասավ.—Աշկո վարթի վրեն:

Չորանը կաթ կթեց, բերեց տվեց տղին, տղեն կաթը կերավ, ասավ.—Չորան ախապեր, մե խնդիրք ունեմ:

Չորանն ասավ.—Ասա՛, տենամ:

—Չորան ախապեր, —ասավ, —ինչ կըհըլնի մե հատ գառ մորթես, փորը տիկ հանես, տաս ընձի:

Չորանը տղի խաթրից դուս չեկավ: Հերավ մե հատ գառ մորթեց, փորը տիկ հանեց, տվեց տղին, տղեն վերցեց, չնորհակալ հելավ, տիկը քաշեց զլոյսն ու ճամփեն շարունակեց: Արկը տվեց գառի փոստը չորացավ, կպավ տղի զլսից, տղեն դարցավ ոնց որ մե հատ քյաչալ մարթ: Էկավ հասավ հիրանց քաղաքը, գնաց հոր բաղի կուշտը, վիզը ծուած կայնավ:

Բաղվանչին էկավ որ բաղը ջրի, տեհավ՝ հեսա մե հատ քյաչալ տղա կայնած ա: Բահը ձեռին քշեց գնաց տղի վրեն կոփի:

—Տո քյաչալ շա՞ն որթի, ինչ ա՞, էկեր ես թաքավորի բաղից բան գողանա՞ս:

Տղեն ասավ.—Չէ՛, բաղվանչի՛ ախապեր, ես գող չեմ, անտեր, եթիմ տղա եմ, ընձի վերցա՛, գամ քո կուշտը աշխատեմ:

Բաղվանչու խելքը մտավ, ասավ. «Քյասիր տղա յա էրկըմ, թո գա աշխատի, մեքյա հաց-մաց կըտամ, կուտի»:

Ասավ.—Լա՛վ, արի՛:

Տղեն ոտերը քշտեց, մտավ բաղի մեջը, սկսեց աշխատել:

Բաղվանչին, որ տեհավ տղեն կոչաղ ա, լավ ա աշխատըմ, ասավ.—Քյաչալ՛, ես էթըմ եմ տունը, մեքյա հաց ուտեմ, էսքան տեղը կըդրես, մինչի իմ գալը:

Քյաչալն ասավ.—Նա՛տ լավ, խազե՛ին:

Բաղվանչին գնաց, տղեն սև ձիան մազը տվեց կրակին, ձինն էկավ, տղեն հիրանը քցեց ձիան վրեն, էնքան քշեց բաղի մչով, որ սաղ բաղը դարցրեց սև ցել: Տղեն ձիանը բրախեց, գնաց մտավ քոլիկը:

Բաղվանչին էկավ. ինչ էկավ, ոնց որ մե կաղղած շուն:

—Տո քյաչալ՛ շան տղա, էս ինչ ա՞ մեր բաղի հալը:

Տղեն ասավ.—Ինչ անեմ, աղա՛, մե հատ կաղղած-հընգնավորած ձիավոր էկավ մտավ բաղը, էնքան ձին դեսուղեն քշեց, որ բաղը ըսենց փշացրեց:

Բաղվանչին ասավ՝ լավ: Հեսքի օրը էլի բաղվանչին տղին մենակ թողեց, գնաց:

Տղեն էս անքամ կարմիր ձիան մազը տվեց կրակին, կարմիր ձինն էկավ, տղեն հեծավ, լենքին-հերգընքին էնքան քշեց, որ բաղը քարուքանդ արավ:

Բաղվանչին դարցավ էկավ, տեհավ, որ բաղի դրությունն ավելի խայտառակ էր: Զեն տվեց՝ Քյաչա՛լ, Քյաչա՛լ: Քյաչալն էկավ ասավ՝ համմե:

Բաղվանչին ասավ.—Տո համմե ու կառնակսա, էս ինչ ա՞ էս բաղի հալը:

Տղեն ասավ.—Խազե՛ին, Հէսօրվա մարթն ավելի հընգնավոր էր, էնքան քշեց, որ բաղի մեջը սպամաթ տեղ չըմնաց, ընձի էլ քցըմ էր ձիան ոտների տակը, անջաղ ազադվամ:

Բաղվանչին ասավ.—Քյաչա՛լ, էս անքամ, որ չես բռնե էդ ձի-ավորին, սևդ կրաքեմ:

Քյաչալն ասավ՝ լա՛վ:

Բաղվանչին գնաց, էս անքամ էլ տղեն սիվտակ ձիան մազը տվեց կրակին, ձինն էկավ, տղեն նստավ ձինն ու հընգավ բաղի մեջը: Մե հատ սաղ տեղ չըթողեց, սաղ քարուքանդ արավ: Բաղվան-չին էկավ, ինչ էկավ՝ փրփրած, միսը տված բերանը:

Կանչեց Քյաչալին, մե քանի սիլլա տվեց, ասավ.—Դե գնա հուա՛դ էլ, չո՛ն-շան որթի:

Խեղճ Քյաչալը ոնց որ էկեր էր, ընենց էլ գնաց:

Գնաց մե զարգար մարթի կուշտ, մե փոր հացով ընդունվավ աշագերթ:

Զարգարը տեհավ, որ տղեն շատ խելոք տղա յա:

Հիրիկունը կնգան ասավ.—Այ կնիկ, մե հատ քյաչալ խելոք տղա եմ վերցե ծառա, բերեմ, թո տանը ծառայի:

Կնիկը բոռաց մարթի վրեն, ասավ.—Ընձի քյաչալ ծառա հար-գավոր չի:

Զարգարը տղին տարավ հիրա կուշտը:

Օրերից մե օր զարգարն ասավ.—Քյաչա՛լ, Հէսօր մեր թաքա-վորի տղեքը փասակվըմ են, ես էթըմ եմ հարսնիք, կընստես խանու-թի դռանը մինչև իմ գալը:

—Աղա՛ ջան, աղա՛, ինչ կըհընի, ընձի էլ տանես հետդ:

—Ա՛յ տղա, տանեմ, ի՞նչ անեմ, զաս, որ ընձ էլ քեզ հետ խայ-տառակ անե՞ս:

Քյաչալն ինչ արեց, չարեց, զարգարը ըըհամաձայնվավ:

Զարգարը որ գնաց, տղեն հելավ սև ձիան մազը տվեց կրա-կին, սև ձինն էկավ: Տղեն հելավ, չորերը փոխեց, նստավ ձին ու քշեց հարսանքատուն: Մտնելու բաշտան էլ աջ-ձախ չիշկաց, պլե-թը քաշեց ու տուր որ կըտաս ախակերներին, մե պլեթ էլ քաշեց

զարգյարիս թիկունքին ու էկավ շորերը փոխեց, տիկը քաշեց զլո-
խը, զնաց նստավ դուռանի դռանը, ոնց որ ըսկի ոչ մե բան չի պա-
տահե:

Էրկու-իրեք սհաթ չանցած՝ խազեինն էկավ:

Տղեն Հարցրեց. — Հը՞, խազե՛ին, ո՞նց էր Հարսանիքը:

Զարգյարզն ասավ. — Քյաչա՛լ, ինչ լավ էր, որ դու չեկար, թե չէ
քեզ էլ իմ օրը քցած կը Հըլնին:

Տղեն էլ չը Հարցրեց, թե ինչ ա պատահե: Հեքսի օրը Հարսանի-
քը շարունազվը էր: Զարգյարն էլի զնաց: Տղեն Հելավ էս անքամ
էլ կարմիր ձիան մազը տվեց կրակին: Ձինն եկավ, տղեն չորերը
փոխեց, նստավ ձին, քշեց Հարսանիքատուն: Նես մտավ, ախպեր-
ներին տվեց դրի տակ, մե լավ ջարթեց, տեհավ, որ զարգյարը
նստած ա մե բանցը տեղ, զնաց մե քո ուզածի պես միլլա էլ Հասց-
րեց զարգյարին ու դուս եկավ:

Զարգյարն էկավ խանութը, տղեն էլի Հարցրեց. — Հը, խազե՛ին,
ո՞նց էր Հարսանիքը:

Զարգյարն ասավ. — Հէսօր էլ մե հատ կարմիր ձիավոր էկավ:

Էն մյուս օրն էլ զարգյարը զնաց, տղեն էլ՝ հետևից, էս անքամ,
սիվտակ ձիով:

Վարթիշաղը որ տեհավ ախվտակ ձիանը, ճանանչավ,
ասավ. — Ըլը՛, տղեն էկեր ա:

Հարսանիքը վերջացավ, մարթիք ցրվան, թաքավորը կանչեց
հիրա վաքիլ-վազրին, ասավ. — Դե էկե՛ք, — ասավ, — տենանք էս
ախչկա ամուսնության համար ի՞նչ եք ասըմ:

Վաքիլ-վազրին ասին. — Թաքավո՛ր, իսկ դու ախչկա կամքը
Հարցե՞ր ես:

Թաքավորն ասավ՝ չէ՛:

— Դե, — ասին, — կանչի՛:

Վարթիշաղին կանչին Հարցրին, Վարթիշաղն ասավ. — Թաքա-
վո՛րն աբրած կենա, եթե ուզըմ եք ընձի ամուսնացնեք, թողե՛ք ես
Հընդում իմ փեսացուն:

Թաքավորն ասավ. — Կամքը քոնն ա:

Ախչիկն ասավ. — Դե որ ըտենց ա, ես հեքուց Հառավոտը կը-
կայնեմ ակուշկին, թո փեսացուները գան Հընցնըն, որին որ էս
խնձորով խփեմ, էն էլ կը Հըլնի իմ ամուսինը:

Թաքավորն ասավ՝ շա՞տ լավ: Հեքսի օրը իշքան էդ երգրին երի-
տասարթներ կային, Հաքնվան, զարթրվան, էկան-Հընցան ախչկա
ակուշկի տակով, ախչիկը ոչ մեկի վրեն չը հչկած, Քյաչալի ճամփեն
էր պահը, Քյաչալի Հընցնելու վախտը ախչիկը ճանանչավ, խնձո-
րը քցելուն պես կպավ Քյաչալի գլխին: Ժողովուրթն ըսկաեց ծծա-

դալ: Գացին թաքավորին ասին, թե՝ բա չես ասի, ախչիկը, էղքան տղեքին թողած, խնձորը խփեց մե քյաչալ տղի:

Թաքավորն հեռատես մարթ էր, ասավ.—Մեղ մի՛ դրեք, հալրաթ էդ ախչկա մուրազն էլ էդ քյաչալ տղեն ա:

Թաքավորն կարքադրեց, ասավ.—Քյաչալի հարսնիքն արե՛ք, մե հատ էլ հավաբո՛ւն տվեք, թո էթան արբեն:

Զանցավ մե քանի վախտ, թաքավորն հիվանդացավ: Ինչ արին-չարին, ըրկարցան բուժեն. թաքավորի ջանը քոս էր հընգե, գոռտեր էր: Հեքիմներն ասին, թե էս հիվանդությունը մենակ առյուծի կաթով կըբուժվի:

Վո՞վ կըբերի, վո՞վ չի բերի առյուծի կաթը, ասին. «Թաքավորի տղեքը ճարպիկ են, ընդանք կանան բերի»:

Քյաչալն որ հիմացավ, ասավ.—Վարթիշա՛ղ, գնա թաքավորին ասա՛, թո թողի ես էլ էթամ տղեքի հետ:

Վարթիշաղը գնաց ասավ, թաքավորն ասավ՝ թո էթա:

Տղեքն հընգան ճամփա: Քյաչալն հելավ հեծավ սիվտակ ձին, հետևներից քշեց:

Քաղաքից որ հելան դուս, ձին լեզու հելավ, ասավ.—Իմ տե՛ր, էս Հո՞ւր ենք էթըմ:

Քյաչալն ասավ.—Էթըմ ենք առյուծի կաթ բերենք:

Ձին ասավ.—Բա դու առյուծի տեղը գիղե՞ս:

Տղեն ասավ՝ չէ՛:

Ձինն ասավ.—Լա՛վ, ոչի՞նչ, ես գիղեմ, էս ֆլան մեշի մըչին ա, ոտն էլ յարս յա, երփ որ կէթանք կըհասնենք էդ առյուծին, նետաղեղը կըհանես, ընենց կըզանես, որ նետը էթա կընի ընդա ոտի յարին, որ յարի մշի թարախը թափի: Թարախը որ թափավ, ցավը կըդիմջանա, առյուծը կասի՛ ուզի՛, ուզածդ տամ, դու կասես՝ քո կաթիցն եմ ուզըմ: Կաթը կըտա, կըբերես:

Մե սհաթ չըքաշած՝ գացին հասան մեշեն, տեհան, որ առյուծը ցավից մե ձեն ա քցե, որ դար ու դաշտ դղրդը ա: Տղեն հանեց կալամթրաշ դանակը, մե հատ կամիշը կդրեց, ծերը սրեց, նշան բռնեց դուզ առյուծի յարին:

Որ չըսփեց, կամիշը գնաց մտավ դուզ առյուծի յարի մեջը, տղեն հասավ, քաշեց կամիշը հանեց, թարախը թափավ, առյուծը դինջացավ, ասեց.—Հը՞, տղա՛, ուզածդ ինչ ա՞, ասա՛, տամ:

Տղեն ասավ.—Քո կաթից եմ ուզըմ:

Առյուծն ասավ՝ աման ունե՞ս, տղեն ասավ՝ չէ՛:

—Դե՛, —ասավ,—էս իմ ճարպերից մեկին տա՛ր մե հեռու տեղ, ընենց տի՛կ հան, որ ձենը չըհընգնի անգածս, թե չէ քեզի փարա-փարա կանեմ:

Տղեն գնաց ձաքերից մեկին տարավ մե փոսի մեջ, տիկ հանեց, բերեց առյուծի կաթը կթեց, լցեց մեջը, նստավ ձին, քշեց էկավ: Էկավ հասավ հիրա հոր խողը: Ձինը բաց թողեց, գնաց մե չորանից բոթուզա էլ էծի կաթ առավ, նստավ ճամփի կրաղը, տեհավ՝ հեսա ախպերները գալըմ են: Ախպերներն էկան տեհան, որ հեսա մե մարթ նստել ա ճամփի կրաղին:

Ասին.—Էդ ի՞նչ ես ծախըմ:

Ասավ.—Առյուծի կաթ:

—Քա՞նի ես տալըմ:

—Թե ես փողով չեմ տալըմ:

—Բա ը՞նչով:

—Հե՞զ, —ասավ, —եթե ուզըմ եք, ես էս իմ ձեռի մատնիքը կըդ-նեմ կրակի մեջ, մեկ-մեկ հատ ձեր ոռի թշերը կըդաղեմ, նշան կա-նեմ, կաթը կրտամ ձեզի կրտանեք:

Ախպերներն ասին.—Ըստուց էլ հեշտ բան:

Տղեն հելավ ըստանց ոռները նշանեց, էծի կաթն էլ տվեց, ասավ.—Դե տարե՞ք:

Տղեքը վերցրին կաթն ու ուրախ-ուրախ էկան:

Բերին կաթը տվին հեքիմին, հեքիմն ասավ.—Էսի առյուծի կաթ չի, էսի էծի կաթ ա:

Քյաշալը, որ տղեքին ճամփու դրեց, շորերը փոխեց, էկավ մտավ հիրա հավաբունը:

Առյուծի կաթը լցեց մե բոթուզի մեջ, տվեց Վարթիշաղին ասավ.—Տար տո՞ւ հեքիմին, թո տանի քսի հորս ջանին:

Վարթիշաղը կաթը տարավ տվեց հեքիմին:

Հեքիմն ասավ.—Այ ինչ եմ ասե, էսի իսկական առյուծի կաթ ա:

Էս փո՞վ ա բերե, փո՞վ չի բերե: Ասին՝ Վարթիշաղի քյաշալ մարթն ա բերե:

Մարթ հղրկին Քյաշալին կանչին պալատը:

Քյաշալն էկավ, ասավ.—Թաքավո՞րն աբրած կենա, բա քո տղեքը կաթ չեն բերե՞:

Թաքավորն ասավ.—Բերեր են, քյաշալ, բայց էծի կաթ են բե-րե, էծի կաթն ընչի՞ս ա:

Քյաշալն հարցրեց, ասավ.—Տղե՞ք, էդ կաթը հո՞ւստ եք առե:

Տղեքն ասին.—Մե հայտնի վաճառական մարթից:

Քյաշալն ասավ.—Ի՞նչ եք տվե:

Ասին.—Քառասուն ոսկի:

Քյաշալն էլ չըհամփերավ, ասավ.—Թաքավո՞րն աբրած կենա, քո տղեքը սութ են ասրմ, էդ կաթը ես եմ տվե ըտանցը, ոչ մե կա-պեկ էլ փող չեմ առե:

Վարիլ-վազիրն ասին.—Բա ի՞նչ հաշվով ես տվե:

Քյաչալն ասավ.—Ոչ մե հաշիվ, մենակ ոռներն եմ դաղե:

—Ո՞նց թե:

—Բա՛, —ասեց, —Հրլա մե էտանց հետևները բացե՛ք:

Տղեքի հետևլ բացին, տեհան, որ հեսա իսկապես ըստանց հետևները դաղած ա:

Քյաչալն հարցրեց ասավ.—Թաքավո՛րն աբրած կենա, դուքա՞նի տղա ունես:

Թաքավորն ասավ.—Իրեք տղա:

Քյաչալն ասավ.—Բա հո՞ւր ա քո երրորդ տղեն:

Ասավ.—Իմ պստի տղեն շուտ ա կորե:

Քյաչալն ասավ.—Զէ՛, թաքավո՛ր, քո տղեն չի կորչե: Քո տղեն հեսա քո հառեչ կայնած ա:

Տղեն քաշեց փոստե տիկը գլխիցը հանեց, էկավ հառեչ, տեսան, որ էսի ճիշտ թաքավորի տղեն ա:

Երփ որ թաքավորն հիմացավ իրա տղեքի անիրավությունը, հրամայեց, ասավ.—Աքսորե՛ք ստանցը իմ քաղաքից, թու էլ աշկիս չէրևան:

Մեծ ու միշնեկ տղին աքսորին, իսկ պստի ախազորը հընտրին թաքավոր:

Երգնքից իրեք հատ խնձոր ա հընգընըմ, մեկը՝ պատմողին, էրկուսն էլ՝ լսողներին:

